Կազմված է 10.10.2017թ. և բաղկացած է 2 թերթից:
Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ ------

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
---------- 2017թ. թիվ --- - Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

_____ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ
08.04.2005թ.

գրանցման թիվ 282.221.005229
վկայական N 03 ²-068406
ՀՎՀՀ 00801884
30.04.2013թ. գրանցված
կանոնադրության թիվ ----------
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից
«-------» ---------- 2017թ.

_____ ----------

«ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
(փոփոխություն)

«Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. Կանոնադրության 1.2. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետի 12.10.2017թ. N.3572-Ա և Երևան քաղաքի ավագանու ------.10.2017թ. N ----- - Ա որոշման համաձայն վերակազմակերպվել է՝ «ՀՀ համայնքային արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ուսումնամեթոդական, գիտաարտադրական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Նոր Նորքի տարածքային բաժնի կողմից 08.07.2013թ., պետական գրանցման համարը՝ 282.210.04746, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00822823, գտնվելու վայրի հասցեն՝ ՀՀ, 0090, ք. Երևան, Նորքի 6-րդ զանգված, Լյուքսենբուրգի 2-րդ նրբ.) նրան միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 30.04.2013թ. ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության անբաժանելի մասը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2017թ. **N----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ **2017** ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ **12-**Ի **N 3572-**Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասին և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետին համապատասխան.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել.

1) Երևանի քաղաքապետի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի **«**ՀՀ համայնքային արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ուսումնամեթոդական, գիտաարտադրական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին» N3572-Ա որոշումը,

2) «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 3572-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ համայնքային արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ուսումնամեթոդական, գիտաարտադրական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ Կազմակերպություն) 26.05.2017թ. դրությամբ ուսանել են թվով 266 սաներ, որոնց թվում առկա են արտադպրոցական տարիքից դուրս սաներ, ինչը հակասում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանվող հիմնական նպատակին, այն է՝ դպրոցականների արտադպրոցական մշակութային ուսուցման ու դաստիարակության իրականացում:

Կազմակերպության գործող խմբակներն են՝ հայկական ժողովրդական գործիքների ուսուցում, ժողովրդական պար, շախմատ, նկարչություն, դեկորատիվ կիրառական արվեստ (խեցեգործություն), մրգերի և բանջարեղենների ձևավորում, հագուստի մոդելավորում և գոբելեն, բատիկա, արևելյան խոհանոց, հելունագործություն և շյուղագործություն:

Ընդ որում, չնայած խմբակներից որոշներն ունեն աշխատանքի շուկայում հստակ պահանջարկված մասնագիտական կամ ձեռնարկատիրական ուղղվածություն:

Կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակները չեն համապատասխանում կազմակերպության անվանման հետ և նրա ներկայիս գործունեությունն ըստ էության որևէ առնչություն չունի գիտական ուղղվածության հետ:

Հաշվի առնելով վերոհիշյալ անհամապատասխանությունները (մեծահասակների ուսուցում, հիմնական գործունեությունից դուրս խիստ յուրօրինակ խմբակների առկայություն, որոնք միանշանակ պետք է համարվեին ձեռնարկատիրական գործունեություն և դիտարկվեին որպես վճարովի ծառայություն)՝ առաջարկվում է Կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպել՝ այն միացնելով Երևանի Նոր Նորք վարչական շրջանի տարածքում գործող «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 3572-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 3572-Ա որոշումը և «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 3572-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի N 3572-Ա որոշումը և «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2017 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ